ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«27» դեկտեմբեր 2024թ.
N 66-01

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարար
Նարեկ Մկրտչյանին

Հարգելի պարոն Մկրտչյան

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական արհմիությունը ողջունում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է կրճատել շաբաթական և օրական աշխատաժամանակի նորմալ տևողությունը:

Վերջին անգամ ութժամյա աշխատանքային ռեժիմի հնացած լինելու մասին խոսել ենք Հոկտեմբերի 7-ին Արժանապատիվ աշխատանքի համար պայքարի համաշխարհային օրվա կապակցությամբ մեր հայտարարությունում՝ https://arhmiutyun.org/2024/10/07/uslgpsea-statement-on-iddw2024-wages-dialogue-wortime :

Միևնույն ժամանակ կարծում ենք, որ կարելի էր փոփոխությունն այնպես ներդնել, որ հնարավոր լինել նաև հետզհետե անցնել 4-օրյա աշխատանքային շաբաթի:

Բազմաթիվ երկրներում արդեն կիրառվում է 6 կամ 7 ժամյա աշխատանքային օրվա կամ 4-օրյա աշխատանքային շաբաթի ռեժիմը և նրանց փորձը փաստում է, որ դա միայն դրական է ազդում կատարած աշխատանքի որակի վրա, բարելավում է

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut

աշխատանքի արդյունավետությունը, դրական է ազդում աշխատողների առողջության, ինչպես նաև պետության բնապահպանական խնդիրների վրա, իսկ աշխատաշուկան ավելի հասանելի է դառնում պոտենցիալ աշխատողների համար։

10 000 -ից ավել արհմիության անդամների անունից կոչ ենք անում հետ չկանգնել նախագծի ընդունումից՝ անկախ բիզնեսի ներկայացուցիչների դիմադրությունից։

Կցում ենք նաև աշխատաժամանակի կրճատման վերաբերյալ Եվրոպական արհմիութենական ինստիտուտի (ETUI) կողմից հրապարակված «*Ինչու և ինչպես կրճատել աշխատաժամանակը*» համապարփակ հետազոտությունը միջազգային փորձի վերաբերյալ։

Առդիր՝ 88 էջ։

Հարգանքով՝
Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի
աշխատողների ճյուղային արհմիության
նախագահ հաստատված է էլ ստորագրությամբ **Ա. Ասատրյան**